ARMENIAN
MINIATURE

GRIGOR

ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ

Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան»

Институт древних рукописей им. Маштоца „Матенадаран"

Mashtots Institute of Old Manuscripts ''Matenadaran''

ԳՐԻԳՈՐ
ГРИГОР
GRIGOR

EDITIONS EREBOUNI

Մատենաշարի գլխաւոր խմբագիր՝ Բ. ՉՈՒԳԱՍԶԵԱՆ
Կազմող՝ ԼԵՒՈՆ ՉՈՒԳԱՍԶԵԱՆ
Նկարիչ՝ Վ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ
Լուսանկարիչներ՝ Պ. ՊՕՂՈՍԵԱՆ եւ Ս. ԱԳՐԱՄԱՆԵԱՆ
Հրատարակչութեան գլխաւոր խմբագիր՝ Վ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Главный редактор серии Б. ЧУКАСЗЯН
Составитель ЛЕВОН ЧУКАСЗЯН
Художник В. ТАДЕВОСЯН
Фото П. ПОГОСЯНА и С. АГРАМАНЯНА
Главный редактор издательства В. КАРАГЁЗЯН

Chief Editor of the "Armenian miniature" series: B. CHOOKASZIAN
Compiler: LEVON CHOOKASZIAN
Designer: V. TADEVOSSIAN
Colour slides by P. POGHOSIAN and S. AGRAMANIAN
Editor-in-Chief: V. KARAGOZIAN

Printed in Finland by YKP 1986

Հայ գրքարուեստի նշանաւոր ստեղծագործութիւններից է Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ **2743** ձեռագիրը, որը յայտնի է Թարգմանչաց Աւետարան անուամբ: Մատեանը **1232** թուականին նկարազարդել է Գրիգոր Ծաղկողը: Ձեռագրի յիշատակարանները չեն նշում յուշարձանի ընդօրինակութեան ու ծաղկման վայրը, սակայն կողմնակի որոշ փաստեր հաւաստում են, որ այն պէտք է գրուած լինի Կարինում:

Այս մատեանը իր անուանումը ստացել է Գանձակի մօտ գտնուող Թարգմանչաց վանքից, որտեղ պահուել է մինչեւ **1900** թուականը: Այս թուականին է, որ հայ մշակոյթի նշանաւոր երախտաւոր Գարեգին Յովսէփեանը ձեռագիրը բերել է Էջմիածին:

Թարգմանչաց Աւետարանի մանրանկարները հայ ստեղծագործ հանճարի արտակարգ դրսեւորումներն են: Միջնադարի արուեստում, յատկապէս մանրանկարչութեան մէջ, եզակի են այնպիսի յուշարձաններ, որոնց մէջ նման ամբողջականութեամբ արտայայտուած լինի հեղինակի ստեղծագործական դէմքը, այդքան որոշակի կարդացուեն նրա խոհերն ու յոյզերը, այդպէս շեշտուած լինեն զգացմունքային պոռթկումները:

Թարգմանչաց Աւետարանի մանրանկարներից ճառագում է Գրիգոր Ծաղկողի հոգեկան հզօր լիցքը: Նկարչի բուռն յոյզերի ժայթքումները դրսեւորման ձեւ են ստացել գունային լարումների մէջ: Վարպետի վրձնի գեղարուեստական ներքին տրամաբանութեամբ նկարների խորհրդաւոր գունաշխարհում իրենց շեշտակի դիրքը եւ անկրկնելի տեղն են ստացել կարմրի բռնկումներն ու բոցավառումները:

Գրիգոր Ծաղկողը փայլուն կերպով տիրապետում է ներկապնակի գաղտնիքներին, մասնաւորապէս գոյնի կամ գունաշարի բերած տրամադրու-

թեան ճանաչմանը: Նա ժառանգում է այդ իմացութիւնը հին վարպետներից, իսկ գծային կառուցումների մէջ խիստ որոշակի կերպով զգացւում է հաղորդակցութիւնը 12-րդ դարի նկարիչների կերտուածքներին: Գրիգորը համաքայլ է ընթանում իր այն ժամանակակիցների հետ, որոնք Հայաստանում եւ հարեւան ու հեռու երկրներում զարգացման նոր աստիճանի էին մղում 12-րդ դարի վարպետների առաջաւոր ձեռքբերումները: Խօսքը այն նկարիչների նուաճումների մասին է, որոնք իրենց ստեղծագործութիւններով նշանաւորում էին հոգեկան նոր զարթօնքը, որը արուեստի ժամանակակից պատմաբանները անուանում են Կոմնինեան վերածնութիւն, Բիզանդիայում 12-րդ դարի երկրորդ կէսում իշխող կայսերական գերդաստանի անուամբ:

Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Գրիգոր Ծաղկողին յայտնի են եղել որմնանկարչական սկզբունքները: Դրանում համոզում է ոչ թէ լոկ Թարգմանչաց Աւետարանի մանրանկարների կոթողայնութիւնը, այլ որոշ տեսարանների պատկերների համաչափութիւնների համընկնումը Կապադովկիայի ժայռափոր տաճարների որմնանկարների համամասնութիւնների հետ: Այս հանգամանքը յատկապէս կարեւոր է, եթէ նկատի առնենք, որ տարբեր ուսումնասիրողների կողմից բազմիցս նշուել են նախկինում հայաշատ տարածքի՝ Կապադովկիայի որմնանկարների՝ հայ գրքարուեստի օրինակներին աղերսուելու փաստերը:

Գրիգոր Ծաղկողի ստեղծագործութիւնը մեծ նշանակութիւն ունի հայ եւ միւս ժողովուրդների արուեստի պատմութեան տեսակէտից ոչ միայն իր ոճական ինքնատիպութեամբ, այլեւ օգտագործուած պատկերատիպերի եզակիութեամբ. այսպէս՝ «Քրիստոսը եւ Զակքէոսը» լուսանցքային մանրանկարում օգտագործուած է վաղ քրիստոնէական արուեստից յայտնի եւ յետագայ դարերում այլեւս գրեթէ չհանդիպող նախօրինակը:

«Ծննդեան» տեսարանի Մարիամի կերպարը իր առանձին մանրամասնութիւններով հարազատանում է Գրիգոր Ծաղկողից փոքր ինչ աւելի ուշ ստեղծագործած Թորոս Ռոսլինի 1262 թուականի ձեռագրի համանուն մանրանկարի Աստուածամօր կերպարի հետ:

Միեւնոյն նախօրինակի հիման վրայ են ստեղծուած Թարգմանչաց Աւետարանի եւ Թորոս Ռոսլինի 1256 թուականի մատեանի Մատթէոս Աւետարանչի կերպարները: Հնաւանդ եւ քիչ հանդիպող ընդհանուր պատկերատիպեր են օգտագործուած այս երկու նշանաւոր վարպետների ուրիշ մանրանկարներում եւս: Այս ընդհանրութիւնների պատճառը Կարինի ու Հռոմկլայի /որտեղ ընթացել է Ռոսլինի գործունէութիւնը/ գրչատներում ընդունուած միեւնոյն կամ նման նախօրինակների գոյութիւնն է: Դրանում յատկապէս համոզւում ենք Թարգմանչաց Աւետարանի խորաններն ու անուանաթերթերը քննելիս: Վերջիններս մի շարք աղերսներ ունեն Հռոմկլային վերագրուող 12-րդ դարի մատեանների ձեւաւորումների հետ:

Գրիգոր Ծաղկողի արուեստը ներշնչման աղբիւր է եղել յետագայ դարերի հայ նկարիչների համար, 14-րդ դարի նշանաւոր վարպետ Թորոս Տարօնացին մի քանի անգամ օգտագործել է իր ձեռագրերում Թարգմանչաց Աւետարանից ընդօրինակուած Մատթէոս Աւետարանչի պատկերագրական օրինակը:

Ինչպէս անցեալում, այնպէս եւ այսօր Գրիգոր Ծաղկողի արուեստը շարունակում է գրաւել ու յուզել Թարգմանչաց Աւետարանի հետ հաղորդակցուողներին:

ԼԵՒՈՆ ՉՈՒԳԱՍԶԵԱՆ

Рукопись № 2743 Матенадарана им. Маштоца, известная как Евангелие Таргманчац — является одним из значительных произведений армянской книжной живописи. Рукопись была иллюстрирована в 1232г. художником Григором. Памятные записи не указывают места создания памятника, однако некоторые факты свидетельствуют о том, что он был написан в Карине.

Рукопись получила свое название от монастыря Таргманчац, находящегося недалеко от г. Гандзака, где она хранилась до 1900г. Именно в этом году известный деятель армянской культуры Гарегин Овсепян перенес рукопись в Эчмиадзин.

Миниатюры Евангелия Таргманчац — выдающиеся проявления армянского творческого гения. В средневековом искусстве, особенно в миниатюре, единичны памятники, в которых с такой целостностью проявляется творческая личность автора, с такой ясностью читаются его мысли и переживания, так акцентированы его эмоции.

Миниатюры Евангелия Таргманчац излучают мощный духовный заряд художника Григора. Бурные чувства нашли форму выражения в напряженном колорите. Внутренней логикой кисти мастера, в таинственном цветовом мире изображений, особое место отведено вспышкам красного цвета.

Художник Григор блестяще владеет всеми секретами палитры, особенно знанием настроения, вызываемого цветом или цветовой гаммой. Он унаследовал это знание у старых мастеров, а в линейных построениях вполне ощутима связь с произведениями художников XIIв. Григора можно поставить в один ряд с теми его современниками, которые в Армении и в соседних странах поднимали на новую ступень развития передовые достижения мастеров XIIв. Речь идет о тех художниках, чьи произведения ознаменовали новый духовный расцвет, называемый историками искусства Комниновским ренессансом, по имени императорской династии, царствовавшей в Византии во второй половине XIIв.

Исследования показывают, что художнику Григору были известны принципы фресковой живописи. В этом убеждает нас не только монументальность миниатюр Евангелия Таргманчац, но и совпадение пропорций некоторых изображений с пропорциями фресок каппадокийских пещерных церквей. Это обстоятельство особенно важно, если учесть, что исследователями не раз отмечались факты общности между фресками Каппадокии (область, прежде густо населенная армянами) и армянской книжной живописью.

Творчество художника Григора представляет огромное значение для истории искусства армянского и других народов не только своей стилистической оригинальностью, но и самобытностью использованных моделей. Так, например, в маргинальной миниатюре ,,Христос и Закхей" использован прототип, известный по раннехристианскому искусству и впоследствии почти не встречающийся.


Образ Марии в миниатюре ,,Рождество" некоторыми своими деталями приближается к образу богоматери той же миниатюры из рукописи, украшенной в 1262г. Торосом Рослином, творившим несколько позже.

По одному и тому же прототипу создан образ евангелиста Матфея Евангелия Таргманчац и рукописи 1256г. Тороса Рослина. Архаичные и мало встречающиеся общие образцы использованы этими двумя выдающимися художниками и для других миниатюр. Причиной этого является существование общих или сходных образцов в скрипториях Карина и Ромклы (где протекала творческая деятельность Тороса Рослина). В этом убеждает изучение хоранов и заглавных листов Евангелия Таргманчац. Последние во многом связаны с оформлением рукописей XIIв., приписываемых скрипторию Ромклы.

Творчество миниатюриста Григора служило источником вдохновения для армянских художников последующих веков. Известный мастер XIVв. Торос Таронаци в своих рукописях несколько раз пользовался иконографическим образцом евангелиста Матфея, заимствованного из Евангелия Таргманчац.

В наши дни, как и прежде, искусство художника Григора продолжает пленять воображение людей, знакомящихся с Евангелием Таргманчац.

ЛЕВОН ЧУКАСЗЯН



կանոն. Ե. չորսերորդն

Մատթէոս	Ղուկաս
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]

կանոն. Զ. չորսերորդն

Մատթէոս	Մարկոս
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]

կանոն. Ժ. չորս

Ղուկաս	Ղուկաս	Ղուկաս
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]

առանձին


Յովհաննէս	Յովհաննէս	Յովհաննէս
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]

Աւետարան ըստ Մարկոսի

ՍԿԻԶԲՆ ԱՒԵ
ՏԱՐԱՆԻ ՅԻ ՔԻ
ՈՐԴՒՈՅ ԱՅ. Ո
ՐՊԷՍ ԳՐԵԱԼ Է ՅԵՍԱՅԻ
ՄԱՐԳԱՐԷ. Ա
ՀԱՒԱՍԻԿ ԵՍ Ա
ՌԱՔԵՄ ԶՀՐԵՇ
ՏԱԿ ԻՄ ԱՌԱՋԻ
ԵՐԵՍԱՑ ՔՈՑ




EDITIONS
EREBOUNI



Աւետարան Ղուկասու


ՔԱՆԶԻԲԱԶՈՒՄՔ
ՅՕԺԱՐԵՑԱՆ Վ
ԵՐՍՏԻՆԿԱՐԳԵԼ
ԶՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՎԱՍՆԻՐԱՑՆՀԱ Ս
ՏԱՏԵԼՈՑԻՄԵԶ.
ՈՐՊԷՍԱՒԱՆԴ Ե
ՑԻՆՄԵԶ ՈՐԻ ՍԿ
ԶԲԱՆԷԱԿԱՆԱ Տ
ԵՍՔԵՒՍՊԱՍԱՒ



Աւետարան ըստ Յովհաննու

ՍԿԶԲԱՆԷ Է
ՐԲԱՆՆ՝ ԵՒԲԱՆՆ
ԷՐԱՌԱԾ՝ ԵՒԱԾ
ԷՐԲԱՆՆ՝ ՍԱԷՐԻ
ՍԿԶԲԱՆԷԱՌԱԾ
ԱՄԵՆԱՅՆԻՆՉ
ՆՈՎԱՒԵՂԵՒ՝ ԵՒ
ԱՌԱՆՑՆՈՐԱԵ
ՂԵՒԵՒՈՉԻՆՉ՝ ՈՐ
ԻՆՉԵՂԵՒՆՈՎԱՒ





Printed in Finland by Yhteiskirjapaino Oy 1984

Manuscript No. 2743 of the Mashtots Matenadaran, which is known as the "Translators' Gospel", is one of the most outstanding among Armenian book illumination. It was illustrated in 1232 by Grigor. The colophons of the manuscript do not mention where the writing and ornamentation were carried out, but certain incidental facts testify that the book may have been written in Karin.

The manuscript received its name from the monastery of "Translators", near Gandzak, and was kept there until the year 1900. It was then, that the renowned Armenian scholar and art historian Gareguin Hovsepian took the manuscript to the Etchmiadzin depository.

The miniatures of the Translators' Gospel reveal all the characteristics of the creative genius of the Armenian people. In medieval art, and especially in miniature painting, we may find unique manuscripts where the creative skill of the painter is expressed so completely, his thoughts and emotions displayed so distinctly and his feelings emphasized.

The miniatures of the Translators' Gospel reflect the artist's spiritual strength. The colour strains express the artist's strong emotion. Flashes and blazes of red have found their right place and arrangement in the mysterious colour range of the illustrations due to the painter's artistic comprehension.

The artist Grigor was master of the palette and its secrets, especially the mood brought forth by the colour range. He inherited this knowledge from the old masters; as for drawings, here a distinct link can be seen with the works of 12th cent. artists. Grigor kept in pace with his contemporaries who in Armenia and in neighbouring and distant countries, raised the progressive achievements of the 12th cent. masters to new levels of development. This refers to the achievements of those artists who, with their creations, marked the new spiritual awakening, which modern art historians call the Comnenian Renaissance, after the imperial dynasty ruling over Byzantium in the second half of the 12th cent.

Studies show that the artist Grigor knew the principles of fresco-painting. This is verified not only by the monumentalism of the Translators' Gospel miniatures, but also because the proportions of certain scenes coincide with those of the frescoes of Cappadocian cave churches. This is particularly important if we consider the fact that various scholars have often mentioned the relationship between the Cappadocian (a territory formerly inhabited densely by Armenians) frescoes and samples of Armenian book illumination.

Grigor's works are of great significance in the art history of Armenians and other nations not only because of its original style, but also for the uniqueness of the types used. In the marginal illustration "Christ and Zacchaeus", for example, the artist used a model known to early Christian art but almost never seen in later paintings.

In the miniature representing "The Nativity", the figure of Mary in its details, coincides with the figure of the Virgin in the same scene created somewhat later by Toros Roslin in the manuscript dated 1262.

The portraits of the Evangelist Matthew in the Translators' Gospel and in Toros Roslin's manuscript of 1256, are both based on the same model. Traditional and seldom met types common for these two famous artists are to be found in their other miniatures as well. The reason for these conformities is the presence of the same or similar models in the scriptoria of Karin and Hromkla (where Toros Roslin lived and worked). We become more convinced on examining the Canon-Tables and the title-pages of the Translators' Gospel, which have certain similarities with the decorations of the 12th cent. manuscripts attributed to Hromkla.

Grigor's art has become a source of inspiration for Armenian artists of later centuries. In his miniatures the well-known 14th cent. artist Toros Taronatsi used the iconographic model several times of the Evangelist Matthew, copied from the Translators' Gospel.

At present as in the past, those who are acquainted with the miniatures of the Translators' Gospel, are deeply moved and impressed by the art of the artist Grigor.

LEVON CHOOKASZIAN

Մանրանկարների ցանկ
Список миниатюр
List of Miniatures



Ավետում, էջ' 188 բ

Благовещение, л. 188 об.

Annunciation, fol. 188 v.



Խորան, էջ' 7 բ

Хоран (Таблица канонов), л. 7 об.

Khoran (Canon-Tables), fol. 7 v.



Խորան, էջ' 10 ա

Хоран (Таблица канонов), л. 10.

Khoran (Canon-Tables), fol. 10 r.



Մատթէոս Աւետարանիչ, էջ՝ 11 բ

Евангелист Матфей, л. 11 об.

Portrait of Matthew, fol. 11 v.



Մատթէոսի Աւետարանի անուանաթերթը, էջ՝ 12 ա

Заглавный лист Евангелия от Матфея, л. 12.

First Page of the Gospel of Matthew, fol. 12 r.



Ծնունդ, էջ՝ 15 ա

Рождество, л. 15.

Nativity, fol. 15 r.



Մարկոսի Աւետարանի անուանաթերթը, էջ՝ 115 ա

Заглавный лист Евангелия от Марка, л. 115.

First Page of the Gospel of Mark, fol. 115 r.



Խորհրդաւոր ընթրիք, էջ՝ 170 ա

Тайная вечеря, л. 170.

Last Supper, fol. 170 r.



Աստուածամօր ննջը, էջ՝ 294 ա

Успение Богоматери, л. 294.

Dormition of the Virgin, fol. 294 r.



Ղուկասի Աւետարանի անուանաթերթը, էջ՝ 185 ա

Заглавный лист Евангелия от Луки, л. 185.

First Page of the Gospel of Luke, fol. 185 r.



Էջքը դժոխք, էջ՝ 184 ա

Сошествие во ад, л. 184.

Descent into Hell, fol. 184 r.

Շապիկի առաջին երեսի վրայ՝ Յուդայի դաւաճանութիւնը /հատուած/, էջ՝ 178 բ

На первой стороне обложки — Предательство Иуды (фрагмент), л. 173 об.

Jacket Cover Illumination (front) — Betrayal (fragment), fol. 173 v.

Շապիկի երկրորդ երեսի վրայ՝ Մկրտութիւն, էջ՝ 20 ա

На второй стороне обложки — Крещение, л. 20.

Jacket Cover Illumination (back) — Baptism. fol. 20 r.



Քրիստոսի փորձութիւնը անապատում /հատուած/, էջ՝ 202 ա

Искушение Христа в пустыне (фрагмент), л. 202.

Temptation of Christ in the Wilderness (fragment), fol. 202 r.



Յովհաննէս Աւետարանիչ եւ Պրոխորոն, էջ՝ 295 բ

Евангелист Иоанн с Прохором, л. 295 об.

John the Evangelist Dictating to Prochoros, fol. 295 v.



Յովհաննէսի Աւետարանի անուանաթերթը, էջ՝ 296 ա

Заглавный лист Евангелия от Иоанна, л. 296.

First Page of the Gospel of John, fol. 296 r.



Հրեշտակի յայտնութիւնը իւղաբեր կանանց, էջ՝ 114 ա

Явление ангела женам-мироносицам, л. 114.

Holy Women at the Sepulchre, fol. 114 r.